ԳԱԳԻԿ ԽԱՉԻԿՅԱՆ

# ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ «ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԸ» ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լոզանի համալսարանում սովորելիս Ահարոնյանը Շվեյցարիայից ստացած իր տպա- վորությունները գրում և 1898թ. «Մշակի» մեջ տպագրում է «Իմ տպավորություններից» վերնագրով հոդվածում: Նա հետագայում այն օգտագործել է «Շվեյցարական գյուղը» երկը ստեղծելիս: Վերջինը գրվել է 1902թ., տպագրվել «Մուրճի» 1902–1904թթ. համարներում: Հեղինակը հիմնականում հանդես է եկել Կուրբաթ-Հարուն ծածկանունով: Առանձին գրքով լույս է տեսել Թիֆլիսում 1913թ. «Շվեյցարական գյուղը» գրված է նամականու ձևով և բաղկացած է 20 նամակից:Այն Շվեյցարիայի՝ Եվրոպայի կենտրոնում գտնվող այդ գեղեցիկ ու քաղաքակիրթ երկրի՝ հիմնականում գյուղաշխարհի մասին գրողի տպավորություններով, ազգագրական տեղեկություններով, հրապարակախոսական ու քնարական մտորումներով հագեցած, սակայն հիմնականում ուղեգրության ժանրին պատկանող երկ է:

Այստեղ Ահարոնյանը հանդես է գալիս որպես Շվեյցարիայում սովորող ուսանող: Առաջին նամակից պարզվում է,որ նա իր համագյուղացի ընկերոջից նամակ է ստացել,որը խնդրում է իրեն տեղեկություններ հայտնել այդ երկրի մասին: Եվ ահա գրողը նրա խնդրանքը կատարում է՝իր պատասխան նամակները մամուլի էջերում հրապարակելու միջոցով: Ուղեգրության ժանրային առանձնահատկությունից էր բխում այն, որ հեղինակը,ամեն կարևոր թեմայի կապակցությամբ զուգահեռներ է անցկացնում շվեյցարական գյուղի և հայրենի գյուղաշխարհի միջև: Նա միաժամանակ պարզաբանում,ցույց է տալիս երկու երկրների գյուղացիների քաղաքակրթական մակարդակների, ազգային, կենցաղավարական սովորությունների տարբերությունների պատճառները և հայրենի գյուղի հետամնացությունը հաղթահարելու հնարավոր եղանակները: 20-րդ դարի սկզբին, Ահարոնյանի տեսած շվեյցարական գյուղը այնքան մեծ տարբերություն ուներ հայկական գյուղի համեմատությամբ, որ նա հարկադրված էր զգուշացնել իր ընկերոջը, թե այն գյուղը որտեղ ինքն է գտնվում կարելի է համարել ամենասովորականներից. «Ես քեզ կնկարագրեմ այդ գյուղն այնպես, ինչպես, որ նա կա,առանց ավելացնելու, առանց չափազանցությունների: Եթե նկարագրիս մեջ երբեմն գտնես վառ գույներ, բանաստեղծական կտորներ, այդ էլ ընդունիր իբրև զուտ իրականություն և ոչ արդյունք իմ երևակայության թռիչքների»[1]:

Ի՞նչն է ի վերջո շվեյցարականի համեմատ հայկական գյուղի անբարեկարգության, կոպիտ բարքերի, վատ սովորությունների, ընդհանրապես արատավոր երևույթների բուն պատճառը: Գրողը կոնկրետ դրվագների, փաստերի, կենցաղավարության միջև զուգահեռներ անցկացնելով, բացահայտում էր այն ցավալի իրողությունը,որ իր հայրենի տարածաշրջանի գյուղացիները ազգային անկախ պետության մեջ չէին ապրում /ինչի մասին նա ուղղակիորեն չէր կարող գրել/:Իսկ ցարական Ռուսաստանի բուրժուաֆեոդալական, միապետական կարգերի պայմաններում տեղի ունեցող բազում ապօրինությունները, թուրք ու քուրդ բարբարոս ցեղերի հարևանությունը շարունակ վտանգավոր իրավիճակներ էին ստեղծում հայկական գյուղերում: Այդ ամենին գումարվում է սոցիալական անարդարություններով պայմանավորված գյուղական համայնքների ներքին անկազմակերպվածությունն ու իշխողների քմահաճույքները: Այս ամենի հետևանքով,ահա, իր հայրենիքում. «Մարդը հասարակական խնամքի, հոգածության առարկա չէ»/229/,-շեշտում է հեղինակը: Իսկ մի այլ տեղ նշում,որ եթե հասարակությունը անհատի դեմ է մեր երկրում,ապա «հասարակությունն անհատի համար է Շվեյցարիայում»/257/:

Գրողն ընդգծում է, որ ինքը ազգագրական աշխատություն չի գրում, ուստի՝ նամակները չի ծանրաբեռնում,զանազան թվերով, փաստական տեղեկություններով: Հիշատակարանում գրառումներ կատարողի պես տարբեր թեմաներ ազատորեն արծարծելու տրամադրվածությունն էլ Ահարոնյանին հնարավորություն է տալիս իր ընթերցողներին ծանոթացնել շվեյցարական գյուղին բնորոշ այլազան երևույթների հետ,գրի առնել, տարբեր մարդկանց ու դեպքերի հետ առնչվող կենցաղային իրողություններ,որոնք ոչ միայն ազգային, այլև համամարդկայիան նշանակություն ունեցող բարոյահոգեբանական խնդիրներ քննարկելու տեղիք են տալիս: 2-րդ նամակում գրողի դիտարկումների կենտրոնում է շվեյցարական գյուղերում պանսիոնների առատությունը, այստեղ ժամանակավորապես բնակվող տարբեր ազգությունների պատկանող մարդիկ: Այն պանսիոնում, ուր գրողն իր ամառային հանգիստն էր անցկացնում, հանդիպում ենք այնպիսի մարդկանց, որոնք գրողի մեջ խորը մտորումների տեղիք տալու պատճառով ատաղձ են հանդիսացել հետագայում գրելու մի քանի պատմվածքներ /«Օհանի վիշտը», «Ուշացած սեր»/ և «Լռություն» վեպը: Պարզվում է, օրինակ, որ «Լռություն» վեպի մեջ Կլարայի կերպարի նախատիպ է հանդիսացել պանսիոնում խնամողի հետ հանգստանալու եկած անգլիացի մի հարուստ ընտանիքի աղջիկ: Նա հոգեկան հավասարակշռությունից դուրս էր եկել՝ ավանդական նախապաշարումների պատճառով /իր սերը սիրած երիտասարդին առաջինը խոստովանել չկարողանալու հետևանքով/: Նկատի ունենալով այս անգլուհուն՝ գրողը կատարում է այսպիսի դիտարկում. «Ինչպես

տեսնում ես, սիրելի՛ս, կինը անգամ քաղաքակիրթ երկրներում դեռ չի ազատվել այն բարոյական կապանքներից,որ դարբնել է հասարակությունը, կամ ավելի շուտ տղամարդկանց հասարակությունը,դարձնելով նրան իրավազուրկ, բայց բազմաթիվ պարտականություններով ծանրաբեռնված մի էակ»/217/: Շվեյցարական գյուղերի պանսիոններում հավաքված տարբեր ազգերի ու կրոնների պատկանող մարդկանց համակեցությանը Ահարոնյանը դաստիարակչական մեծ նշանակություն էր տալիս: Ըստ գրողի՝ նույն շինության մեջ ապրելիս վերոհիշյալ մարդկային խայտաբղետ բազմության անդամները հարգանքով են վերաբերվում միմյանց,ազգային խտրականությունը թուլանում է «սովորում են սիրել իրար համամարդկային սիրով,որ չի ճանաչում ցեղական,կրոնական, բարոյական անմիտ նախապաշարմունքներ»/218/.

Անվտանգ,բարեկեցիկ կյանքով ապրող,գործարար շվեյցարացի գյուղացին իր առօրյայում նաև կենսախինդ է, բարեհոգի, պատրաստ օգնելու անծանոթին՝ մարդասիրությունից ելնելով: Այդպիսին չեն հայ գյուղացիներից շատերը: Նրանք դարեր շարունակ օտարի, արևելյան բռնակալների լծի տակ գտնվելու հետևանքով շատ արատավոր սովորություններ են պահպանել, դարձել օտարերկրացու նկատմամբ կասկածամիտ ու զգուշավոր:Թեև հայ գյուղացին խելացի է, բայցև նույն հանգամանքների պատճառով չի կարողացել գյուղական պայմանների համար հարմարավետ տուն կառուցել,ապրել քաղաքակիրթ կենցաղավարությամբ: Ու ահա այս ամենի հետևանքով շվեյցարացի գեղջկուհին չի կարողանում հավատալ, որ հաց թխելու համար կրակը հայ գյուղացին վառում է խրճիթի կենտրոնում սարքված թոնրի մեջ՝ աչք կուրացնող ծխով լցնելով ողջ սրահը: Այն նաև դժբախտ պատահարների պատճառ է դառնում փոքրահասակ երեխաների համար: Շվեյցարացի գյուղացու և հայ գյուղացու տների տարբերություններն ավելի տեսանելի դարձնելու համար հեղինակը գրում է. «Ես հիշում եմ մեր գյուղի տները, այն գարշահոտ տները, ուր անհուն ժամանակից ապրում է հայ գյուղացին, հիշում եմ մեր թոնիրները, նրանց շուրջը խմբված տկլոր ու գզգզված մանուկները,որոնցից քանի քանիսը տարիների ընթացքում հենց իրանց առջևի հնոցի բոցերի մեջ են ընկնում և կենդանի խորովվում»/225/: Այդ համեմատության մեջ գրողը շեշտում է,որ շվեյցարական գյուղի կենցաղը քաղաքակիրթ են դարձնում երկրում պետականորեն վերահսկվող, գյուղերում արմատավորված կարգուկանոնը, համայնքներում գործող ինքնակարգավորման ավանդույթները: Զուգահեռի մեջ դիտարկելով հայկական գյուղի կենցաղը՝ Ահարոնյանը ցավով է արձանագրում,որ շվեյցարա կանի համեմատությամբ հայ գյուղացին ասես քարե դարում է դեռևս ապրում: Այդ մասին են վկայում թե՛ կրոնական ակնածանքով ու սնահավատությամբ հյուրի կամ անծանոթի նկատմամբ դրսևորված վերաբերմունքը, թե անձնապաստան եսասիրությունը,

երբ գազա- նը /բորենին կամ գայլը/ երեխաներ է հափշտակում գյուղերում: Այսպես,օրինակ, գյուղում հյուրին սուրբ համարելու նկատմամբ կրոնական նախապաշարվածությունը գրողը գտնում է, որ պետք է հաղթահարվի՝ իրատեսական, բանական մոտեցում հանդես բերելով: Այդպիսի սթափ վերաբերմունքի հանդիպելով շվեյցարական գյուղում՝նա գրում է.«որ այս բոլորը կատարվում է ո՛չ կրոնական երկյուղի դրդումով,ոչ՝ որովհետև՝«ծամփորդը սուրբ է և Աստուծո հովանու տակ», այլ որովհետև նա մի մարդ է, դեպի որը պարզ մարդկային պարտք պիտի կատարել առանց որևէ ակնկալության երկնքում կամ երկրի վրա»/234-235/:

Հարգանքով վերաբերվելով յուրաքանչյուր ազգի թաղման արարողությունների առանձնահատկություններին՝ գրողն այնուամենայնիվ ավելի քաղաքակիրթ է համարում հոգեհաց տալու շվեյցարական գյուղում ընդունված չափավոր և էժան ձևը. «մի բաժակ գինի և մի հատ կարկանդակ,ահա շվեյցարական գյուղում մեռելահացը: Նայում էի և մտածում մեր երկրի տնաքանդ «քելեխի» մասին»/244/:Գրողն այնուամենայնիվ կարծում է, որ մեզանում ընդունված այդ վնասակար սովորույթը պետք է վերացնել,սակայն «երբեք չհեգնել, երբեք թեթևամտորեն չվերաբերվել, և որ գլխավորն է, երբեք չվիրավորել ժողովրդի զգացմունքները, որոնց հետ խորապես կապված են այս կամ այն սովորությունները: Ամեն բան կախված է միմիայն ժողովրդի կրթությունից,նրա մտավոր մակերևույթի բարձրացնելուց, մնացածը ինքն իրան կկատարվի»/244/:

Ահարոնյանին Շվեյցարական գյուղում հետաքրքրում է այն ամենը,ինչը և ինքնին է հետաքրքիր, իբրև եվրոպական քաղաքակրթության կենտրոնում գտնվող երկիր: Այսպես, օրինակ, մամուլն այստեղ համեմատաբար ավելի անկախ է: Ինչը նպաստել էր, որ շվեյցարական հեռավոր մի գյուղում,ուր հայտնվել էր գրողը, ճիշտ տեղեկություններ հաղորդվեին հայկական հարցի մասին: Մինչդեռ նույն ժամանակաշրջանում Ֆրանսիայում լայնորեն տարածվող մի թերթ հայկական կոտորածների/1894-96թթ./ առիթով լուսանկարներ էր տպագրել «որոնք ցույց էին տալիս,թե ինչպես հայերը ավերում են թյուրքական մզկիթները և կոտորում են «խեղճ» թուրքերին: Ապականված մամուլի վարիչները աշխարհի մեծագույն ոճրագործներն են»/267/,-եզրափակում է ասելիքը գրողը:

Ահարոնյանը ուսանելի և տվյալ շրջանում իր հայրենիքում կիրառելի է համարում համայնքի շրջանակում տնտեսությունը առավել նպատակահարմար կերպով կազմակերպելու որոշ ձևեր: Դա վերաբերում է և կաթը իրացնելուն, և հացի հասարակական փուռեր ունենալուն:Այս վերջին հանգամանքի շնորհիվ հնարավոր կլիներ «առհասարակ ազատել մեր գեղջկուհիներին թոնիրներում հաց թխելու սպանիչ սովորությունից»/271/:

Շվեյցարական գյուղաշխարհում,մասնավորապես Վո կանտոնում /ուր նա ապրում էր/ տնտեսական և ընդհանրապես քաղաքակրթական զարգացման պատմությունը, գյուղացիների բարեկեցությունն ու գյուղի բարեկարգությունը գրողն ի վերջո պայմանավորում էր հանրապետության մյուս կանտոնների հետ երկրի իրավահավասար բաղկացուցիչ մասը լինելու հանգամանքով: Ինչ խոսք, այս կանտոնն ունեցել է իր անկախության համար մղած պայքարի պատմությունը, որի շնորհիվ այն հասել է նման կարգավիճակի: Հարյուր ամյա /1803-1903/ ազատությունն ու անկախությունը հսկայական փոփոխություններ են առաջ բերել այստեղ: Օտար երկրների տիրապետության տակ գտնվող իր հայրենիքից եկած գրողի համար տեղի քաղաքակրթական ձեռքբերումներն ավելի քան ակներև էին: Արտառոց տարբերություններն իրենց զգացնել էին տալիս ամեն քայլափոխի: Այդ տարբերությունը յուրովի է արտահայտվել նաև արվեստում: Օրինակ՝ այն պիեսի բեմադրության մեջ,որը նկարագրում է գրողը 9-րդ նամակում:Այստեղ նա պատմում է այն մասին, որ եթե մի պաստորի երեքամսյա բանտարկությունն ու ժողովրդի բողոքը տասանորդի դեմ տարաձաշջոնի տարեգրության մեջ «խոշոր» դեպքերից են համարվում, ապա «Մեզ արևելցիներիս համար այսպիսի անցքերը մնում են աննկատելի» /284/: Բացի այս, նշելով,որ պաստորի կինը խելագարվում է ամուսնու բանտարկության պատճառով՝գրողն անմիջապես զուգահեռ է անցկացնում հայ կանանց հետ: «Ի՞նչ անեն հապա արևելքի սև երկնքի տակ այն մայրերը, որոնց զավակները հոշոտվում են իրանց աչքերի առաջ,այն կանայք, որոնց ամուսինները խողխողվում կամ կորչում են հավիտյան և այն ոչ հարյուր տարի առաջ, խավար անսիրտ ժամանակներում, այլ այսօր, այս քաղաքակրթված դարում» /284/:

Շվեյցարիայում քաղաքակրթության ձեռքբերումներն ունեն ամենատարբեր դրսևորումներ թե ծաղկի հանդեպ պաշտամունքի հասնող սիրով, թե ընդհանրապես մարդկանց ու կենդանիների նկատմամբ սրտացավ, հոգատար վերաբերմունքով: Անշուշտ, հայ մարդը կենդանիների հետ հարազատի պես կապվածության զգացում միշտ էլ ունեցել է: Բայց և այնպես գրողը նկատում է կենդանիների նկատմամբ դրսևորված մի շարք արատավոր երևույթներ, որոնք դեռևս չմշակված,կոպիտ ու դաժան սովորույթներ պահպանելու մասին են վկայում: Այդպիսին է, օրինակ, մեզանում հարսանիքի ժամանակ շուրջպարի մեջտեղում եզ մորթելու սովորույթը: Ցավով էր նշում գրողը,որ թշվառության մեջ հայտնված մեր գյուղացին հաճախ նաև առօրյայում բիրտ էր վերաբերվում կենդանիների ու իր նմանի հանդեպ: Գրողի պատկերացմամբ «Իրական քաղաքակրթությունը՝ արդարության գերագույն հաղթանակն է...»/292/, ինչին կարելի է հասնել թե բանական, թե ոչ բանական արարածների նկատմամբ իրական սրտացավություն դաստիարակելու միջոցով:

Շվեյցարիայի օրինակով գրողը ազգի քաղաքակրթական բնականոն զարգացումը,նախ և առաջ պայմանավորված էր համարում նրա քաղաքական ազատությամբ ու անկախությամբ, ինչպես նաև կրթադաստիարակչական համակարգի, լուսավորության, մասնավորապես դպրոցների գործունեությամբ: Գրողը երկու ծավալուն նամակ /11-րդ,12-րդ/ է հատկացրել շվեյցարական գյուղական դպրոցների, նրանց գործունեությունը դաշնային /ֆեդերատիվ/ և կանտոնի սահմանադրություններով կանոնակարգող օրենքների հետ ծանոթացնելու համար: Այդ ամենի մեջ ի՞նչն էր հատկապես կարևորում Ահարոնյանը: «Ինչպես տեսանք,-գրում է նա,- Դաշնակցական Սահմանադրությունը ժողովրդական կրթության օրենքի մեջ առանձնապես շեշտում է երեք խոշոր սկզբունքի վրա.ա/ ծրի և պարտադիր տարրական կրթություն, բ/ խղճի կատարյալ ազատություն և գ/ աշխարհական ոգու գերիշխանություն»/297/: Նման դեմոկրատական, արդարացի մոտեցման շնորհիվ է հաջողվել քաղաքակիրթ ձևով կարգավորել բազմազան դավանանքներ /կաթոլիկություն, բողոքականություն՝ իր տարատեսակներով/ ունեցող, բազմալեզու /գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն/ շվեյցարացի ազգաբնակչության կրթությունն ու դաստիարակությունը: Ահարոնյանի ուշադրությունը սևեռվում է հատկապես այն հանգամանքի վրա,որ Շվեյցարիայում «դպրոցներն աշխարհիկ են»,և որ «Կանտոնային սահմանադրությունը կրոնի դասավանդությունը դուրս է թողնում պարտադիր առարկաների կարգից և դարձնում կամավոր»/298/: Գերմանախոս բնակչությունը թեև գերակշռում է երկրում,սակայն գերմաներենը ամենևին չի պարտադրվում,և այն ընդհանուր դարձնելու մասին չեն էլ մտածում: Աշխարհիկ կրթությունը այստեղ աշակերտների մեջ որոշակի տարրական պատկերացումներ է ձևավորում ոչ միայն երկրագնդի կառուցվածքի, այլև բնական երևույթների առաջացման, դաշտային ու այգեգործական աշխատանքների մասին: Մարմնամարզության դասերը պարտադիր են:Իսկ աղջիկները սովորում են կարուձև, ձեռագործ, «տուն կառավարել, հիվանդ խնամել, մի փոքր դեղագործություն»: Ահարոնյանին հատկապես հետաքրքրում է դպրոցներում դասավանդվող «քաղաքացիական դաստիարակություն» «օրիգինալ» առարկան: Պարզվում է, որ այդ առարկայի դասագրքի հեղինակը Նումա-Դրոզին է,մի ճանաչված մտավորական,որը ըստ Ահարոնյանի՝ 1895 թվին խոսք կար,որ պետությունների կողմից Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու դեպքում գեներալ-նահանգապետ էր նշանակվելու: Ահարոնյանը գտնում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր քաղաքացիական դաստիարակությունը, բարոյական սկզբունքները, որոնցով սահմանվում են մարդու հիմնական իրավունքներն ու պարտականությունները: Նրա պատկերացմամբ քաղաքացիական դաստիարակության սկզբունքներով կարելի է որոշել տվյալ երկրի

քաղաքակրթության մակարդակը: Զարգաց- ման ցածր աստիճանի վրա գտնվող ժողովուրդների մեջ անորոշ, խառնիխուռն են նրանց բարոյական հասկացողությունները,պարտքի և իրավունքի մասին պատկերացումները լի են հակասություններով: Մինչդեռ. «Տրամաբանության,հետևողական սիստեմի վրա հաստատված բարոյականությունը հատուկ է բարձր կուլտուրայի հասած ժողովուրդներին, որոնք առաջնորդվում են բանականությամբ, արդար օրենքներով և ոչ թե վայրիվերո ու խախուտ սովորություններով, նախապաշարմունքներով, կրոնական առասպելներով» /310/, -գրում է Ահարոնյանը: Օգտվելով Նումա-Դրոզի դասագրքից ու առարկայի ծրագրից՝ գրողը ներկայացնում է այն հիմնական ու կարևոր դրույթներն ու սկզբունքները –«որով շվեյցարական քաղաքացին մշակում է իր հոգին»/312/: Այս ամենի արդյունքում դպրոցն ավարտելուց հետո շվեյցարացի պատանին. «**ճանաչում է իր հայրենիքի անցյալն ու ներկան, գիտե բոլոր հաստատությունները**-դատական, վարչական, գիտե օրենքները, հասկանում է պաշտոնյաների պարտքերը և իրավունքները: Իր պարտքը կատարում է սրբությամբ, որովհետև սիրում է իր հայրենիքը, հպարտ է նրա քաղաքացիությամբ,և հարգում է իր երկրի օրենքները, որոնց մեջ ինքը մաս ունի իբր քվեարկող»/313/: Ահարոնյանը շատ մանրամասնու- թյունների մեջ չի խորանում գիտակցաբար: Պատճառն այն էր,որ ինքը գրում էր քաղաքական ու քաղաքացիական լայն ազատությունների հասած, հանրապետական կարգեր ունեցող Շվեյցարիայի մասին, մինչդեռ իր ուղեգրությունը տպագրվում էր ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող ազգի պարբերականում: Գրողը զուգահեռաբար ցույց է տալիս, թե իր իրավունքների ու պարտականությունների մասին օրենքների չիմացությունը ինչպիսի դրամատիկ, ցավալի իրողությունների տեղիք է տալիս իր հայրենիքի գյուղացիների միջավայրում:

Ժանրի տեսաբանը,ճիշտ է նկատել,որ ուղեգրության մեջ. «Օտար երկրի երևույթի գնահատման աստիճանը որոշվում է ճանապարհորդի «սեփական» աշխարհով՝ նրա հայրենիքով, ողջ պատումն ուղղված է դեպի նրա հետ ունեցած հարաբերությունը՝իբրև կենտրոն»[2]: Ահարոնյանը ևս կամա թե ակամա առաջնորդվել է այս սկզբունքով՝բնականաբար ավելի հանգամանորեն կանգ առնելով շվեյցարական կյանքի այն կողմերի վրա, որոնք համեմատության եզր են դառնում իր հայրենիքի հետ: Շվեյցարական գյուղում իրականաց- վող արդարադատության և բանտերի մասին խոսելիս /13-րդ նամակ/ գրողը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ այստեղ առանձնացնում են վնասակար անհատին, սակայն չեն անարգում, զսպում են նրան,բայց չեն տանջում, քանզի ըստ գրողի՝ «Յուրաքանչյուր հանցանք գուցե շատ ավելի շարժառիթներ,ազգակներ ունի անհատից դուրս,քան անհատի մեջ»/325/:

15-րդ նամակում Ահարոնյանը գրում է շվեյցարական բա- նակի, զինվորական ծառայության կարգի մասին: Այստեղ թեև ուղղակի զուգահեռներ չի անցկացնում հայ իրականության հետ, բայց և այնպես շվեյցարացու հայրենասիրությունն ու զինվորական պարտքը կատարելու յուրօրինակ պարտավորության կատարումը ինքնին օրինակելի է համարվում: Այս տեսանկյունից ուշարժան է արդեն այն, որ գրողը հաստատում է,թե ինքը գիտի «որ յուրաքանչյուր շվեյցարացի նաև զինվոր է»/351/:

Ուշագրավ է,որ գրողը Շվեյցարիայի հանրապետական քաղաքական կարգը, կենտրոնական ու տեղական իշխանությունների կառուցվածքն ու ղեկավարման սկզբունքները առանձին դեպքերում օրինակելի է համարում նաև եվրոպական և այլ երկրների համար: Խոսքն ուղղելով ընկերոջը՝ նա գրում է. «Ես առիթ ունեցել եմ քեզ գրելու, թե այս փոքրիկ ժողովուրդը ինչպես կարողացել է իր ջերմ ծոցում տարբեր լեզուների, տարբեր ցեղերի ձգտումները հաշտեցնել մի մեծ գաղափարի՝ քաղաքացիական պարտականությունների վրա հաստատելով ազգային ամբողջությունը: Մինչդեռ ուրիշ երկրներում /օրինակ Ավստրիա/ տարբեր ցեղերը, կրոնները ու լեզուները բզկտում են իրար կամ հեծում են մի բռնապետական բիրտ ռեժիմի տակ /օր.Թուրքիա/, այստեղ բոլորն ապրում են եղբոր պես հավասար իրավունքով: Այս մասին կարելի է ամբողջ հատորներ գրել»/338/: Գրողն անշուշտ այն օրինակելի էր համարում նաև ցարական Ռուսաստանի համար,որը նույնպես բազմազգ պետություն էր: Սակայն այդ մասին նա նույնիսկ ակնարկ չէր կարող անել Թեև արդեն մեծ համարձակություն էր պահանջվում Շվեյցարական հանրապետության առաջադիմական քաղաքական կարգի հետ ծանոթացնելը կովկասահայ ընթերցողներին: Նա հաճույքով է ընդգծում, որ երկրի նախագահը,որը ընտրվում է մեկ տարով, «դրված է նյութական ամենասովորական պայմանների մեջ.նրա տարեկան ռոճիկն է 13.500ֆր./մոտ 5000 ռուբլի/, մինչդեռ իր մյուս ընկերներն /մինիստրները-Գ.Խ./ ստանում են 12.000 ֆր. տարեկան: Պարզ է, որ այդպիսի միջոցներով Դաշնակցության նախագահը՝ ինչքան և նա կամենալու լինի, չի կարող իր համաքաղաքացիներից տարբերվել ապրուստի,նիստուկացի եղանակով, չի կարող ամբոխ շլացնելու համար ճոխություն փռել իր շուրջը» /366-367/:

Քանի որ շվեյցարական համայնքը իր «բարոյական պատկերով» համապատասխանում է հայկական գյուղին,այդ իսկ պատճառով գրողը ավելի շատ վերջինիս վարչական կառուցվածքի, տեղական իշխանությունների իրավունքների ու պարտականությունների վրա է կանգ առնում:Համայնքի գործունեությունը օրենքով կարգավորվածության և դրանց բարեխղճորեն հետևելու շնորհիվ՝ այն իր հերթին մի շարք կողմերով դառնում է օրինակելի հայկական գյուղի համար: Ուստի՝ վերջին նամակներում Ահարոնյանն արդեն խոսում է իր

հայրենի գյուղում իր աչքի առաջ տեղի ունեցած հրդեհի, հարկահանության, ճանապարհների անբարեկարգ լինելու հետ կապված վրդովեցուցիչ դեպքերի մասին, որոնք տեղի էին ունենում հայկական գյուղական համայնքի անկազմակերպ, վայրիվերո «կարգ ու կանոնի» հետևանքով:

Ի վերջո,ամփոփելով ուղեգրությունը Ահարոնյանը վերջին /20-րդ/ նամակում ընդգծում է, որ իր նպատակն այն չի եղել,որ շվեյցարական գյուղի օրինակով կարճ ժամանակամիջոցում վերափոխի հայկական գյուղը: Նա ցավով է նշում,որ «Մեր ժողովուրդը իր բոլոր թշվառությունները, իր բոլոր սև օրերը,իր անճար խեղճությունը համարում է մահվան պես բնական, անխուսափելի, անողոք: Արևելքի մռայլ պատմությունն է ծնել այս ~~ազ~~ետավոր ըմբռնումը կյանքի,որ ընդունակ է հավաքական թե անհատական կամքերը փշրել և ձեռներեցության ոգին սպանել: Պետք է քանդել այս խավար հասկացողության բորբոսնած, գարշահոտ շենքը»/398/: «Շվեյցարական գյուղը» ուղեգրությունը ստեղծելով՝ գրողն իր խնդիրն է համարել փոխել ժողովրդի մեջ կարծրացած նման պատկերացումները: Շվեյցարական գյուղաշխարհի օրինակով նա ձգտել է ցույց տալ,որ մեր ժողովրդը ևս իմանա «թե այլ կացություն, այլ ճակատագիր հնարավոր է և իր համար. թող գիտենա, թե կան հեռավոր հորիզոններ,ուր մարդը չի հեծում, չի տնքում,ուր աշխատանքին զուգահավասար ընթանում է և բարձր վայելքը, և անխառն հաճույքը: Թող նա երազի, տենչա, թող մխա նրա հոգին հեռավոր գեղեցկության, երջանկության կարոտով»/398-399/: Ահարոնյանը, ձգտելով մնալ իրատես,միաժամանակ շեշտում է, որ «Շվեյցարիան էլ դրախտ չէ»/399/: Այստեղ ևս սոցիալական անհավասարությունն իրեն զգացնել է տալիս, թունավորում է կյանքը: «Խնդիրը սակայն համեմատական չափի մեջ է և մանավանդ կյանքի դժվարությունների, ծախորդությունների, դժբախտ պատահարների դեմ մաքառելու և նրանց հաղթելու մեջ»,-գրում է Ահարոնյանը: Նա հոռետես չէ իր հայրենիքի ապագայի հանդեպ: Վերջին նամակում, ամփոփելով իր ասելիքը,գրողն ընդգծում է,որ իր երկիրը թեև դեռևս խավարի մեջ է, բայց նա հարուստ է քնած ուժերով, որոնք «ժամանակի ու պայմանների պետք ունին քաղաքակրթական հզոր ու գեղեցիկ ստեղծագործությունների համար»/400/:

«Շվեյցարական գյուղը»,ինչպես նաև Ահարոնյանի մյուս ուղեգրությունները /«Իտալիայում»,«Իտալական էսքիզներ»,«Դեպի Անի» և այլն/ հայ ուղեգրական գրականության մեջ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ և հետաքրքիր կարող են լինել ժամանակա կից հայ ընթերցողների համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Ահարոնյան Ա.,Եկերի ժողովածու, հ. 3, Հռո կինը, Շվեյցարական գյուղը, Բոստոն, 1948, էջ 207: Այս հատորից մյուս մեջբերումները կատարելիս տեքստում նշել ենք միայն էջը:
2.Литературный энциклопедический словарь, Москва,1987,с.314:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՄՆԱՐԿԱ